ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արշալույս Հարությունյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՔԱլմաթի, Ղազախստան, 2025 թվականի փետրվար 24-ից 25-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն:

***4.* Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ձևավորած Մակրո-ֆիսկալ հարցերով ռեգիոնալ ցանցի երկրորդ աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները՝

Մակրո-ֆիսկալ հարցերով ռեգիոնալ ցանցի երկրորդ աշխատաժողովին մասնակցել են Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ղեկավար կազմի, ինչպես նաև ԱՄՀ ղեկավար կազմի ներկայացուցիչները և մասնագետները, ովքեր քննարկումներ են իրականացրել, այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են.

•Հարկաբյուջետային կանոնների կիրառումը տարածաշրջանի երկրներում,

•Ֆիսկալ ինստիտուտների դերը հարկաբյուջետային կանոնների կիրառման գործընթացում, տարածաշրջանի և ԵՄ մոտեցումները,

•Մակրո-ֆիսկալ մոդելները որպես հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության գործիք,

•Հարկաբյուջետային քաղաքականության կայունացնող դերը տարածաշրջանի երկրներում,

•Հարկաբյուջետային ռիսկերի ինտեգրումը հակաբյուջետային կանոնների և հակաբյուջետային շրջանակիի հետ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի ընթացքում ներկայացրել եմ մակրո-ֆիսկալ ուղղությամբ ՀՀ ձեռքբերումները և հարուստ փորձը՝ անդրադառնալով մի շարք առանցքային հարցերի, ինչպիսիք են՝ մակրոտնտեսական կանխատեսումների և քաղաքականության վերլուծության համակարգը և զարգացման հեռանկարները, հարկաբյուջետային կանոնների Հայաստանի փորձը, կանոնների մոդելավորման մոտեցումները և մոնիթորինգի համակարգը:

Աշխատաժողովի ընթացում մասնակից երկրների ներկայացուցիչները նույնպես ներկայացրել են իրենց երկրների հարկաբյուջետային զարգացումները և ֆիսկալ կանոնները և այս ուղղությամբ առկա փորձը, մտքեր են փոխանակվել մակրոտնտեսական և հարակբյուջետային արդի մարտահրավերների շուրջ:

Միաժամանակ, աշխատաժողովի ընթացքում երկկողմ հանդիպումներ եմ ունեցել ԱՄՀ տարբեր ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ Հայաստանի երկրի թիմի առաքելության ղեկավար Իվա Պետրովայի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի ղեկավար Նորբերտ Ֆանկեի և մակրոտնտեսական հարցերի գծով խորհրդական Մարտին Ֆուկաչի հետ: Հանդիպումների ընթացում քննարկվել են ՀՀ համար տեխնիկական աջակցության առաջնահերթությունները և հնարավորությունենը, ինչպես նաև քննարկվել է ՀՀ ՖՆ աշխատակիցների կարողությունների զարգացման ուղղությամբ հնարավոր աջակցությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատաժողովի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել, և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

9. *Ստորագրությունը, ամսաթիվը՝*

03.03.2025թ.